ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հունվարի 2025 թվականի N 186

«ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԴԱՐԲՆՈՑ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետով, հիմք ընդունելով սույն թվականի հունվարի 14-ի N 4 արձանագրությունը և հաշվի առնելով հետևյալը.

Աբովյան համայնքի 2025 թվականի կարիքների համար 2024 թվականի դեկտեմբերի 09-ին հայտարարված ԱԲՀ-ԷԱՃԾՁԲ-25/09 ծածկագրով թափառող կենդանիների ստերջացման ծառայությունների ձեռքբերման ընթացակարգի շրջանակում «ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԴԱՐԲՆՈՑ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացվել է նվազագույն գնային առաջարկ՝ 1980000 /մեկ միլիոն ինը հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամ: Հայտերի գնահատման արդյունքում պարզվել է, որ «ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԴԱՐԲՆՈՑ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը /հավելված 1/ հաստատված չէ տնօրենի կողմից էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ներկայացված չէ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի կայքէջի հղումը /հավելված 1.3/:

Հանձնաժողովը կասեցրել է նիստը և առաջարկել «ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԴԱՐԲՆՈՑ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը մեկ աշխատանքային օրվա ընթացքում (ներառյալ 2025 թվականի հունվարի 10-ը) շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Օրենքով սահմանված ժամկետում <<ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԴԱՐԲՆՈՑ>> ՍՊԸ-ի կողմից չեն կցվել e-AUCTION համակարգ փաստաթղթերի շտկված տարբերակները:

Արդյունքում գնահատող հանձնաժողովը «ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԴԱՐԲՆՈՑ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը գնահատել է անբավարար:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԴԱՐԲՆՈՑ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացրել հրավերով նախատեսված փաստաթղթերը, հետևաբար այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում.

1. Դիմել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը՝ «ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԴԱՐԲՆՈՑ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:
2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել «Գնումների մասին» օրենքով սահմանված ժամկետում և կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ

2025թ. հունվարի 27
Ք. Աբովյան